

Ազգային ժողովի նախագահ՝
պարոն Արարատ Միրզոյանին

ՀՀ ազգային ժողովի պատգամավորներին
.....
Ներքոստորագրյալ փաստաբաններից

22.12.2020թ.

ՊԱՀԱՆՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույնով ներքոստորագրյալ փաստաբաններս պահանջում ենք վերացնել Հայաստանի Հանրապետությունում ՀՀ կառավարության 27.09.2020թ. թիվ 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությունը հետևյալ պայմանաբանությամբ՝

2020թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ռուսաստանի Դաշնության նախագահի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի կողմից հայտարարվել է **(այսուհետ՝ Հայտարարություն)** գրավոր համաձայնության մասին, որի համաձայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է կրակի և բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցում՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին Մոսկվայի ժամանակով 00:00-ից: Հայտարարության 8-րդ կետի համաձայն՝ «Իրականացվում է ռազմագերիների և այլ ձերբակալվածների և մահացածների մարմինների փոխանակում»:

2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո փաստացի դադարել են ռազմական գործողությունները, ուստի այս պահին ռազմական դրության պահպանումն այլևս հակասահմանադրական է:

ՀՀ Սահմանադրության 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական

վրանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

Ընդ որում ռազմական դրությունը պահպանելով հանդերձ՝ արդեն իսկ վերացվել են ռազմական դրությամբ պայմանավորված մի շարք սահմանափակումներ, այդ թվում հավաքների ազատության, տեղաշարժի ազատության և այլն: Նման պայմաններում ռազմական դրության իրավական ռեժիմը արհեստականորեն պահպանելով իրականում երկու հարց է լուծվում՝

1. Առկա է սահմանադրաիրավական արգելք վարչապետին անվստահություն հայտնելու հարցում:

ՀՀ Սահմանադրության 115-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել:*

Վերը նշված իրավական կարգավորումը հստակ արգելք է սահմանում վարչապետին անվստահություն հայտնելու հարցում, անկախ վերջինիս գործողությունների կամ անգործության բնույթից և վտանգավորության աստիճանից:

2. Ստեղծվում է իրավական խոչընդոտ Ադրբեջանի Հանրապետությունից բոլոր ռազմագերիներին անհապաղ հետ պահանջելու հարցում:

Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին կոնվենցիայի 118-րդ հոդվածը սահմանում է՝ ***ռազմագերիներն ազատվում և հայրենադարձվում են անմիջապես ռազմական գործողությունները դադարեցվելուց հետո:***

Հայտարարությամբ ռազմագերիների վերադարձման ժամկետ չի սահմանվել, սակայն Հայաստանի Հանրապետությունը զրկված չէ վերը նշված կոնվենցիային հղում կատարելով պահանջել ռազմագերիների անհապաղ վերադարձ, որպիսի պահանջը ռազմական դրության պայմաններում առնվազն խոցելի կլինի:

Ավելին՝ հաշվի առնելով, որ մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունը գոնե հրապարակայնորեն չի պահանջել բոլոր ռազմագերիների անհապաղ վերադարձ, դա կարելի է կատարել ռազմական դրությունը վերացնելու հետ միասին:

II. Սույնով ներքոստորագրյալ փաստաբաններս պահանջում ենք սկսել վարչապետին անվստահություն հայտնելու գործընթաց, հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության վարչապետը իր բազմաթիվ գործողություններով և հատկապես անգործությամբ արդեն ապացուցել է պետությունը ղեկավարելու իր անկարողությունը:

ՀՀ վարչապետի վարած քաղաքականության արդյունքում՝

Ա. Տապալվեցին Արցախի Հանրապետության խնդրի շուրջ բանակցությունները.

Բ. Արցախի Հանրապետությունը ենթարկվեց զինված հարձակման, որի արդյունքում պաշտոնական տեղեկությունների համաձայն նահատակվեց ավելի քան 5000 հայորդի, բազմաթիվ անձինք ստացան հաշմանդամություն, հարյուրավոր հայորդիներ գերեվարվեցին, հարյուրավոր զինծառայողներ համարվում են անհայտ կորած.

Գ. Հայ ժողովրդից գաղտնի ստորագրվեց մի փաստաթուղթ, որով Ադրբեջանին փոխանցվեց Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը՝ տարբեր հաշվարկներով շուրջ 80 տոկոսը.

Դ. Այժմ վարչապետը Սյունիքի և սյունեցիների անվտանգությունն ապահովելու փոխարեն այնպիսի դիրքեր է հանձնում Ադրբեջանին, որոնց փոխանցմամբ սյունեցիների կյանքն ուղղակի վտանգի տակ է դնում՝ չթողնելով նրանց այլ վայր գաղթելու այլընտրանք:

Ե. Վարչապետի գործողության և անգործության արդյունքում Ադրբեջանը գերեվարել է հայորդիների անգամ ռազմական գործողությունների փաստացի դադարից և Հայտարարությունը ստորագելուց հետո:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք արձանագրել, որ վարչապետի «շնորհիվ» հայ ազգը բազմահազարանոց զոհեր տալուց հետո արդեն իսկ կորցրել իր հայրենիքի մի մասը:

Վերջին օրերում ստեղծված իրավիճակից ակնհայտ է, որ վարչապետը նախատեսում է շարունակել իր գործելաոճը, երբ զոհված զինվորի մորը դեմ գնալով այցելում է որդու գերեզման, երբ սյունեցիների կամքին հակառակ՝ փորձում է նրանց հետ հանդիպել:

Ակնհայտ է նաև, որ վարչապետի՝ օր ավել պաշտոնավարումը սպառնում է Հայաստանի Հանրապետությանը պետականության, իսկ հայ ժողովրդին՝ հայրենիքի կորստով:

Վերոգրյալը հաշվի առնելով պահանջում ենք սկսել ՀՀ վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը:

Ծանուցման հասցե՝ ք.Երևան, Զաքյան 7-2

Փաստաբաններ՝